ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՊ/38-2021

„17„ 02 2021թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի գարնանային հեղեղումների, սելավների վտանգի նվազեցման և դրանց կանխարգելման միջոցառումների իրագործման նպատակով առաջարկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի սելավավտանգ գոտու համայնքների ղեկավարներին.

1) 2021 թվականի մարտի սկզբից իրականացնել հեղեղատարների վտանգավոր հատվածներում կանխարգելիչ միջոցառումներ, իսկ դրանց իրականացման անհնարինության դեպքում գրավոր ներկայացնել առաջարկություններ՝ հնարավոր վտանգների կանխարգելման և լուծման ուղիների վերաբերյալ:

2) Հեղեղումների սպառնալիքի կամ վտանգի դեպքում համայնքի վարչական տարածքի վտանգավոր տեղամասերում իրականացնել արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպել բնակչության և նյութական արժեքների տարահանում:

3) Հանձնարարել Արարատի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը՝ հավաքագրել ու վերլուծել ՀՀ պետական և

համայնքային բյուջեներով այս ուղղությամբ իրականացված աշխատանքների և միջոցառումների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը և, ըստ անհրաժեշտության, դրանց մասին տեղեկատվություն ներկայացնել Արարատի մարզային փրկարարական վարչությանը և համապատասխան կառույցներին:

2. Արարատի մարզային փրկարարական վարչության պետին. վեր հանել և հսկողություն սահմանել մարզի համայնքներում հնարավոր հեղեղավտանգ և սելավավտանգ գոտիներում առկա իրավիճակը և դրանց մասին պարբերաբար զեկուցել Արարատի մարզպետին՝ համապատասխան գերատեսչություններին տեղեկացնելու նպատակով:

3. Որոշումն իրազեկել ըստ առնչության:

Восстановимая подпись

X

ՌԱԶՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN RAZMIK 2008610616 **Ռ. ԹԵՎՈՆՅԱՆ**